**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

**<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>**

**ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Բողոքի ծածկագիրը՝** ԳԲՔԱ-ԼՕ-2021/101

**Բողոքի ներկայացման ամսաթիվը՝** 28.10.2021թ.

**Բողոք բերող անձ՝** «Ռոմա» ՍՊԸ

**Պատվիրատու՝** «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ

**Գնման ընթացակարգի ծածկագիրը՝** «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/105» գնանշման հարցում

**Գնման առարկան՝** բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

**Բողոքի պահանջը՝** պարտավորեցնել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/105» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 19.10.2021թ.-ի ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու որոշումը և պայմանագիր կնքելու մասին որոշումը:

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ**
**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ**

**Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.**

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների

արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

**ՀՀ գնումների հետ կապված**

**բողոքներ քննող անձին**

**հասցե՝** ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան 1

**Բողոք բերող՝** «Ռոմա» ՍՊԸ

**ՀՎՀՀ՝** 00045967

**հասցե՝** ՀՀ, ք. Երևան, Ավան, Բաբաջանյան 9/5

**տնօրեն՝** Ռոման Խոջաբագյան

**հեռ՝** +37411 99-99-69

**Էլ. փոստ՝** gnumner@romamed.am

**Պատվիրատու՝** «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ

**հասցե՝** ք.Վանաձոր, Գ. Նժդեհի փողոց 2/42

**Գնման Ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝**

բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված

թիվ «ՎԲԿ- ԳՀԱՊՁԲ-21/105» ծածկագրով գնանշման հարցում

## ԲՈՂՈՔ

(թիվ «ՎԲԿ- ԳՀԱՊՁԲ-21/105» գնման ընթացակարգի վերաբերյալ)

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով 28.09.2021 թվականին հայտարարվել է թիվ «ՎԲԿ- ԳՀԱՊՁԲ-21/105» գնանաշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

Գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը. **«Արյան վերլուծիչ».**

Տեխնիկական բնութագիրը՝

«Դիագնոստիկ պարամետրեր՝ ոչ պակաս քան 26 ցուցանիշ հաշվելու հնարավորություն, Լեյկոցիտների տարբերակում ոչ պակաս քան 6 տարատեսակի: WBC, Lym#, Mon#, Neu#,Bas#,Eos#,Lym%, Mon%, Neu%,Bas%,Eos%, RBC, HGB, HCT, MCV, MCH, MCHC, RDW-CV, RDW-SD, PLT, MPV, PDW, PCT P-LCR, երիտասարդ բջիջներ# և երիտասարդ բջիջներ %:

Հիստոգրամմա և Սկատագրամմա՝ տրոմբոցիտներ, էրիթրոցիտներ և լեյկոցիտներ Արտադրողականությունը՝ ոչ պակաս քան 50 նմուշ 1 ժամում

Նմուշի ծավալը՝ ոչ ավել քան 25 մկլ ամբողջական արյուն, ոչ ավել քան 20 մկլ կապիլյար արյուն Չափման ճշգրտություն ՝ WBC ≤ 3%,RBC ≤ 2%,Hb ≤1.5%,Hct ≤2%,PLT ≤5%

Գծիկավոր կոդ կարդացող միավորի առկայություն

Գունավոր հպումային LCD դիսպլեյ

Հիշողությունը՝ ոչ պակաս քան 10,000 արդյունքներ

Որակի հսկում՝ոչ պակաս քան 3 մակարդակ, որակի ստուգման ծրագրերի առկայություն ՝ Levey–Jennings գծագիր

Տպիչ՝ արտաքին Լեզուն՝ ոչ պակաս քան ռուսերեն և անգլերեն LIS համակարգին միանալու հնարավորություն

Աշխատակազմի ուսուցում տեղում՝ մասնագետի կողմից Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված

Լրակազմը պետք է ներառի բոլոր անհրաժեշտ լրացուցիչ սարքերը և պարագաները, որոնք անհրաժեշտ են լիարժեք գործունեության համար

Երաշխիք՝ ոչ պակաս քան 12 ամիս Սերտիֆիկատ՝ IVD,ISO 13485, CE Mark կամ համարժեք, բաց համակարգ»

Գնման ընթացակարգի շրջանակում հայտ ներկայացրած մի շարք կազմակերպություններից ընտրված մասնակից է ճանաչվել «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, որը փաստվում է գնման ընթացակարգի հանձնաժողովի 19.10.2021 թվականի թիվ 4 արձանագրությամբ:

Նշված որոշման արդյունքում 20.10.2021 թվականից սահմանվել է անգործության ժամկետ 5 օրացույցային օր ժամկետով:

Գնման ընթացակարգի մասնակից «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ընթացակարգի հրավերով սահմանված Հավելված 1.1-ի համաձայն ներկայացրել է Սիսմեքս ընկերության արտադրության XN-330 մակնիշի արյան վերլուծիչ:

Ուսումնասիրելով համացանցում առկա տեղեկատվությունը վերոնշյալ մակնիշի վերլուծիչի վերաբերյալ, պարզ է դառնում, որ այն աշխատում է իր համար նախատեսված ռեագենտներով: Դա իրենից ենթադրում է, որ սարքը բաց համակարգ չի կարող լինել, հետևաբար հետագայում ցանկացած արտադրության ռեագենտներով չի կարող աշխատել, ինչն էլ կսահմանափակի այլ ընկերության արտադրության ռեագենտների մատակարարումը:

«Ռոմա» ՍՊԸ-ն առաջնորդվելով «Գնումների մասին» օրենքի ԲԱԺԻՆ 6-ով (գնումների գործընթացի բողոքարկումը), գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում է պարտավորեցնել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին իր կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով 28.09.2021 թվականին հայտարարված թիվ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/105» գնանաշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 19.10.2021 թվականի ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N4 արձանագրությամբ կայացված «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու որոշումը և պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Կից Ձեզ է ներկայացվում.

1. «Ռոմա» ՍՊԸ-ի տնօրենի անձնագրի և պետական ռեգիստրի վկայականի պատճենները,
2. Համապատասխան փաստաթղթերի փաթեթը,
3. Բողոքարկման վճարը հավաստող փաստաթղթի պատճենը:

25.10.2021թ.

«ՌՈՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա.Խոջաբաղյան